

## ՀՀ ֆինանսների նախարարություն

### Հարկային և մաքսային մարմինների գանգատարկման հանձնաժողով

Ո Ր Ո Շ ՈՒ Մ 38/3

29 սեպտեմբերի 2015 թ.

Քննարկվեց «Էյ Բի Էյ Գրուպ» ՍՊԸ 31.08.2015 թ-ի դիմում-գանգատը ՀՀ ՖՆ Կենտրոնի ՀՏ 02.07.2015 թ-ի թիվ 6110792 ակտի դեմ:

#### **«Էյ Բի Էյ Գրուպ» ՍՊԸ գանգատում բերված փաստարկները.**

ՀՀ ՖՆ Կենտրոնի ՀՏ կողմից «Էյ Բի Էյ Գրուպ» ՍՊԸ-ում կատարվել է աշխատողի աշխատանքի ընդունումը ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով ձևակերպելու ճշտության (առանց գրավոր պայմանագրի (հրամանի) կնքման աշխատող պահելու դեպքերի բացահայտմանն ուղղված) ստուգում: Ստուգման արդյունքում կազմվել է թիվ 6110792 ակտը, ըստ որի թվով մեկ վարձու աշխատող՝ իրավախորհրդատու Մհեր Բաղդասարյանը ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով ձևակերպված չէ՝ բացակայում էր նրա հետ կնքված գրավոր աշխատանքային պայմանագիրը կամ անհատական իրավական ակտը: Թիվ 6110792 ակտով «Էյ Բի Էյ Գրուպ» ՍՊԸ-ն տուգանվել է 60.000 դրամի չափով:

Ստուգման ընթացքում ընկերության տնօրեն Արմեն Բաղդասարյանն առարկել է ստուգողների կողմից ներկայացված փաստերի դեմ՝ պատճառաբանելով, որ Մհեր Բաղդասարյանի հետ աշխատանքային պայմանագիր կնքվել է և, որի մեկ օրինակն էլ ուղարկվել է «Վարդաշեն» քրեակատարողական հիմնարկ: Մասնավորապես, 04.02.2015 թ-ին «Էյ Բի Էյ Գրուպ» ՍՊԸ-ի՝ ի դեմս տնօրեն Արմեն Բաղդասարյանի, և Մհեր Բաղդասարյանի միջև կնքվել է աշխատանքային պայմանագիր:

Բացի այդ, 05.02.2015 թ-ին «Վարդաշեն» քրեակատարողական հիմնարկից Արմեն Բաղդասարյանին է ուղարկվել հետևյալ գրություն, որում մասնավորապես նշվել է. «ՀՀ ԱՆ քրեակատարողական հիմնարկի բաց տիպում պատիժը կրող դատապարտյալ Մհեր Բաղդասարյանը 2015 թ-ի փետրվարի 4-ին աշխատանքային պայմանագիր է կնքել Ձեզ հետ, որպես իրավախորհրդատու աշխատելու համար: Մհեր Բաղդասարյանի հետ աշխատանքային պայմանագիրը փոխելու, լուծելու կամ արձակուրդ տրամադրելու դեպքում խնդրվում է անհապաղ տեղեկացնել ՀՀ ԱՆ «Վարդաշեն» քրեակատարողական հիմնարկի ղեկավարությանը... »:

Գանգատում բերված են ՀՀ Աշխատանքային օրենսգրքի 14-րդ հոդվածի, «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» ՀՀ օրենքի 10-րդ, 37-րդ, 42-րդ 69-րդ հոդվածների դրույթները:

Տվյալ դեպքում Մհեր Բաղդասարյանը «Էյ Բի Էյ Գրուպ» ՍՊԸ-ում աշխատանքի է ընդունվել կնքելով աշխատանքային պայմանագիր ընկերության հետ: Սակայն, հարկային տեսչությունն անտեսել է ընկերության տնօրենի կողմից ներկայացրած առարկություններն ու փաստաթղթերը, որոնց ստուգող անձինք չեն ցանկացել ծանոթանալ: Այդ փաստաթղթերը հաստատում են այն հանգամանքը, որ Մհեր Բաղդասարյանն աշխատանքի է ընդունվել աշխատանքային օրենսդրության պահանջների պահպանմամբ:

Հարկային տեսչությունն իրականացնելով ստուգում, որն իր հերթին հանդիսանում է վարչական վարույթ, պարտավոր էր բազմակողմանի, լրիվ և օբյեկտիվ քննարկում իրականացնել գործի հանգամանքները բացահայտելու համար, սակայն անտեսել է օրենքի պահանջները: Ավելին, քննարկման առարկա չի դարձրել ընկերության տնօրենի կողմից ներկայացված առարկությունը և փաստաթղթերը պատասխանելով, որ դրանք կազմվել են հետագայում: Օրենքը սահմանում է վարչական մարմնի պարտականությունը, եթե անձի ներկայացրած տվյալների իսկության վերաբերյալ հիմնավոր կասկած է առկա, ապա վարչական մարմինն է պարտավոր իր հաշվին և իր միջոցներով բացահայտել դրանց իսկությունը: Մինչդեռ, հարկային տեսչությունը որևէ ձևով հակառակը չի ապացուցել: Ավելին, ներկայացվել է փաստ, ըստ որի 05.02.2015 թ-ին «Վարդաշեն» քրեակատարողական հիմնարկից Արմեն Բաղդասարյանին է ուղարկվել վերը հիշատակված գրությունը, որում հիշատակվում է Մհեր Բաղդասարյանի հետ համապատասխան աշխատանքային պահմանագիր կնքված լինելու մասին: Ավելին, այս ամբողջ ընթացքում Մհեր Բաղդասարյանի համար վճարվել է եկամտային հարկ օրենքով սահմանված կարգով: Հետևաբար անտրամաբանական է հարկ վճարել մեկի համար, որն ըստ օրենքի աշխատող չի համարվում:

Ելնելով վերոգրյալից՝ «Էյ Բի Էյ Գրուպ» ՍՊԸ-ն խնդրում է վերացնել ՀՀ ՖՆ Կենտրոնի ՀՏ 02.07.2015 թ-ի թիվ 6110792 ակտը:

### **ՀՀ Ֆինանսների նախարարության հարկային և մաքսային մարմինների գանգատարկման հանձնաժողովի եզրակացությունը.**

ՀՀ ՖՆ հարկային և մաքսային մարմինների գանգատարկման հանձնաժողովը (այսուհետ նաև Հանձնաժողով), ուսումնասիրելով սույն գործին առնչվող նյութերն ու ապացույցները եկավ հետևյալ եզրակացության:

Քննարկման ընթացքում նշվեց, որ ՀՀ ՖՆ Կենտրոնի ՀՏ պետի 12.06.2015 թ-ի թիվ 6110792 հանձնարարագրի համաձայն «Էյ Բի Էյ Գրուպ» ՍՊԸ-ում կատարվել է աշխատողի աշխատանքի ընդունումը ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով ձևակերպելու ճշտության (առանց գրավոր պայմանագրի (իրամանի) կնքման աշխատող պահելու դեպքերի բացահայտմանն ուղղված) ստուգում: Արդյունքում կազմվել է ՀՀ ՖՆ Կենտրոնի ՀՏ 02.07.2015 թ-ի թիվ 6110792 ակտը (այսուհետ նաև Ակտ), որով լրացուցիչ գանձման է առաջադրվել 60.000 դրամ եկամտային հարկ:

Ակտի 1-ին կետով մասնավորապես արձանագրվել է, որ թվով մեկ վարձու աշխատող՝ իրավախորհրդատու Մհեր Բաղդասարյանը, ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով ձևակերպված չէր, բացակայում էր նրա հետ կնքված գրավոր աշխատանքային պայմանագիրը կամ անհատական իրավական ակտը: Խախտվել է ՀՀ Աշխատանքային օրենսգրքի 14-րդ հոդվածի 1-ին կետի պահանջները: Արդյունքում, նշված խախտման համար կիրառվել է «Եկամտային հարկի մասին» ՀՀ օրենքի 25-րդ հոդվածի 5-րդ կետով նախատեսված պատասխանատվությունը՝ գումարով 60.000 դրամ:

Քննարկման ընթացքում նշվեց նաև, որ «Էյ Բի Էյ Գրուպ» ՍՊԸ-ի և Մհեր Բաղդասարյանի միջև 04.02.2015 թ-ին կնքվել է աշխատանքային պայմանագիր, որի համաձայն Մհեր Բաղդասարյանը «Էյ Բի Էյ Գրուպ» ՍՊԸ-ում ընդունվել է աշխատանքի որպես իրավախորհրդատու:

Ընկերության ներկայացուցիչների պնդմամբ նշված պայմանագիրը ստուգման ընթացքում ներկայացվել է ստուգումն իրականացնող պաշտոնատար անձանց, սակայն այն վերջիններիս կողմից հիմք չի ընդունվել՝ պատճառաբանելով, որ պայմանագիրը կողմերի միջև կնքվել է խախտումը հայտնաբերելուց հետո:

Այս կապակցությամբ հարկ է նշել, որ «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» ՀՀ օրենքի 10-րդ հոդվածի 1-ին մասով սահմանված է, որ եթե վարչական մարմինը հիմնավոր կասկածներ ունի անձանց ներկայացրած տվյալների, տեղեկությունների իսկության վերաբերյալ, ապա ինքը պարտավոր է ինքնուրույն և իր հաշվին ձեռնարկել միջոցներ՝ դրանց իսկության մեջ հավաստիանալու համար:

Քննարկվող դեպքում ստուգումն իրականացնող անձանց կողմից ընդամենը չի ընդունվել «Էյ Բի Էյ Գրուպ» ՍՊԸ-ի և Մհեր Բաղդասարյանի միջև 04.02.2015 թ-ին կնքված աշխատանքային պայմանագիրը, առանց հիմնավոր ապացույցներ ներկայացնելու պայմանագիրը 04.02.2015 թ-ին կնքված չլինելու վերաբերյալ:

Բացի այդ, սույն գործում առկա է ՀՀ ԱՆ «Վարդաշեն» քրեակատարողական հիմնարկի պետի ժամանակավոր պաշտոնակատարի 05.02.2015 թ-ին ընկերության տնօրենին հասցեագրված գրությունը, որում նշված է «Էյ Բի Էյ Գրուպ» ՍՊԸ-ի և Մհեր Բաղդասարյանի միջև 04.02.2015 թ-ին աշխատանքային պայմանագիր կնքված լինելու մասին: Այսինքն, կարելի է փաստել, որ «Էյ Բի Էյ Գրուպ» ՍՊԸ-ի և Մհեր Բաղդասարյանի միջև 04.02.2015 թ-ին աշխատանքային պայմանագիր կնքված լինելու հանգամանքը հաստատվում է նաև ՀՀ ԱՆ «Վարդաշեն» քրեակատարողական հիմնարկի պետի ժամանակավոր պաշտոնակատարի 05.02.2015 թ-ի գրությամբ:

Հանձնաժողովը գտնում է, որ քննարկվող դեպքում, ըստ էության, կիրառելի են «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» ՀՀ օրենքի 10-րդ հոդվածի 1-ին մասի դրույթները, որի համաձայն. «Վարչական մարմնի կողմից քննարկվող փաստական հանգամանքների վերաբերյալ անձի ներկայացրած տվյալները, տեղեկությունները համարվում են հավաստի բոլոր դեպքերում, քանի դեռ վարչական մարմինը հակառակը չի ապացուցել»:

Տվյալ դեպքում առկա չէ որևէ ապացույց, որը կհիմնավորեր «Էյ Բի Էյ Գրուպ» ՍՊԸ-ի և Մհեր Բաղդասարյանի միջև աշխատանքային պայմանագիրը ոչ թե 04.02.2015 թ-ին, այլ ավելի ուշ կնքված լինելու հանգամանքը:

Ելնելով վերոգրյալից՝ Հանձնաժողովը գտնում է, որ սույն գործում առկա ապացույցները հիմնավորում են «Էյ Բի Էյ Գրուպ» ՍՊԸ-ի աշխատակից Մհեր Բաղդասարյանի աշխատանքի ընդունումը ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով ձևակերպված լինելու հանգամանքը:

Ելնելով քննարկման արդյունքներից և ղեկավարվելով «Հարկային ծառայության մասին» ՀՀ օրենքի 43.1-րդ հոդվածի և «Մաքսային ծառայության մասին» ՀՀ օրենքի 37-րդ հոդվածի պահանջներով հանձնաժողովը

**ո ր ո շ ու մ է՝**

Չեղյալ համարել ՀՀ ՖՆ Կենտրոնի ՀՏ 02.07.2015 թ-ի թիվ 6110792 ակտը:

**Հանձնաժողովի նախագահ՝**



**Վ.ՄԻՐՈՒՄՅԱՆ**